Ա. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ, Ռուս-հայ բարեկամության պատմությունից (19-րդ դարի ռուս-թուրքական պատերազմների Կովկասյան ռազմաճակատում), «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1974, 294 էջ

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների պատմության մեջ Ռուսաստանը հսկայական դեր է խաղացել։ Սկսած արդեն XVII դ. երկրորդ կեսից, երբ հաստատուն քայլերով պատմության բեմահարթակ բարձրացավ ռուսական մեծ պետությունը, հայ ժողովրդի ազատագրական պայքարի հեռատես գործիչներն իրենց ժողովրդի ազատաբաղձ ոգորումները շաղկապեցին Ռուսաստանի հետ, նրանից ակնկալելով օտարերկրյա բռնապետությունների դժնի լծի թոթափումը։ Հետագա դարերի իրադարձություններն անհերքելի ապացույցն հանդիսացան քաղաքական այդ ընթացքի, հայ ժողովրդի ազատագրական մտքի ռուսական կողմնորոշման։ Նրկարատև այդ պատմական ժամանակահատվածում կարևոր իրադարձություններով հղի էր հատկապես XIX դ., որը դրեց հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության շատ հիմնաքարեր, ինչպիսիք էին Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, ռուս և հայ զենքերի ռազմական համագործակցությունը XIX դ. ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներում, ռուս հեղափոխական դեմոկրատական մտքի ազդեցության տակ հայ հեղափոխական դեմոկրատական մտքի ասպարեզ գալը, հայ ժողովրդի դասակարգային պայքարի միացումը ռուս ժողովրդի դասակարգային պայքարին և այլն։

Գրախոսվող աշխատությունը նվիրված է թվարկված հարցերից մեկին՝ XIX դ. ռուս-թուրքական պատերազմների Կովկասյան ռազմաճակատում հայ ժողովրդի զինական մասնակցությանը Թուրքիայի դեմ ռուսական զենքի պայքարին։ Հայ ժողովրդի զինական օգնությունը ռուսական բանակներին իրավացիորեն դիտելով իբրև հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ուրույն դրսևորումներից մեկը, աշխատության հեղինակը արխիվային վավերագրերի և պատմագիտական գրականության ընձեռած հարուստ փաստերով ցույց է տալիս հայ ժողովրդի զանգվածային մասնակցությունը XIX դ. ռուս-թուրքական պատերազմներին, նպատակ ունենալով իր հայրենիքի արևմտյան՝ մեծագույն մասը ազատագրել օսմանյան լծից, հարթել ազգային ու սոցիալական զարգացման համեմատաբար նպաստավոր ուղի։ Ա. Մ. Պողոսյանը համոզիչ փաստերով ապացուցում է, որ Կովկասյան ռազմաճակատում ռուսական դենքի հաղթանակները զգալապես պայմանավորված էին նաև հայ ժողովրդի բարյացակամ վերաբերմունքով, նյութական ու զինական օգնությամբ։ Մատնացույց անելով հանդերձ ցարիզմի վարած քաղաքականության նվաճողական բնույթը, նա չի մոռանում նաև այն կարևոր պարադան, որ ստեղծված պատմական պայմաններում ցարական Ռուսաստանի քաղաքականությունը դրական, առաջադիմական նշանակություն ուներ հայ ժողովրդի համար, որովհետև հնարավորություն էր ստեղծվում թոթափելու օսմանյան սուլթանական վայրագ լուծը և կանգնելու տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի զարգացման անհամեմատ բարենպաստ ուղու վրա։

Ա. Մ. Պողոսյանի աշխատությունը բաղկացած է ներածությունից և չորս գլուխներից, որոնք բավական պատկերավոր խորագրեր են կրում՝ «Կոփվում է մարտական համագործակցությունը», որը վերաբերում է 1806—1812 թթ. ռուս-թուրքական պատերազմին, «Հայ ժողովրդի պայքարը ռուսական բանակի հետ՝ հանուն Արևմտյան Հայաստանի» (ընդգրկում է 1828—1829 թթ. պատերազմը), «Ղրիմի պատերազմը և հայերը», վերջապես, «19-րդ դարի անձնվեր դինակցության վերջին գրվագը», որտեղ խոսքը 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի մասին է։

Աշխատության առաջին գլխում հեղինակը ցույց է տալիս, որ արդեն իսկ ռուսական տիրապետության ծավալումը Անդրկովկասում բորբոքեց հայ ժողովրդի ազատագրական նկրտումները, որովհետև ի դեմս Ռուսաստանի նա տեսավ այն ուժը, որը ի վիճակի էր վերջ տալու արևելյան օտարակալությունների հաստատած ազգային ու սոցիալական անհանդուրժելի վարչակարգին, ստրկացված ռայայի գրությանը։ Չնայած 1806—1812 թթ. ռուս-թուրքական պա-

տերազմի տարիներին Կովկասյան ռազմաճակատում առանձին խոշոր մարտական գործողություններ չծավալվեցին, այսուհանդերձ, պատերազմը Թուրքական կայսրության Անդրկովկասին սահմանակից հայկական նահանգների հայ ազգաբնակչությանը հույս ներարկեց, որ ժամանակի ընթացքում ռուսական զենքի հաղթանակը նրանց փրկություն կբերի դարավոր տանջանքներից։ Ճիշտ է նկատում հեղինակը, որ այդ տարիներին դրվեց այն մարտական զինակցության հիմքը, որը լայնորեն պիտի դրսևորվեր ռուս-Թուրքական հետագա երեք պատերազմների ընթացքում։

Հեղինակն իր աշխատության երկրորդ գլուխը նվիրել է 1828—1829 ԹԹ. ռուս-Թուրքական պատերազմին, որը տեղի ունեցավ մի ժամանակաշրջանում, երբ, չնայած Նապոլեոնյան Ֆրանսիայի դեմ տարած հաղթանակից հետո եվրոպական միապետների ստեղծած ռեակցիոն «Սրբազան դաշինքին», հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումներ ծավալվեցին ոչ միայն Եվրոպայում, այլև Օսմանյան կայսրության տարածքում, մասնավորապես ազգային-ազատագրական պայքարի ելավ հույն ժողովուրդը։ Պատմական այդ ժամանակահատվածը հայ ժողովրդի համար ևս լի էր բախտորոշ իրադարձություններով։ Դրանցից ամենակարևորն այն էր, որ Արևելյան Հայաստանը ազատագրվել էր պարսկական երկարատև լծից, ստեղծվել էր Հայկական մարզ, որը հայկական պետականության վերականգնման հույսեր էր ներշնչել հայ ժողովրդին։ Ահա նման պայմաններում սկսվեց ռուս-Թուրքական 1828—1829 ԹԹ. պատերազմը, որը հայ ժողովրդի արևմտյան հատվածը դիտեց իբրև փրկության և Հայաստանի միավորման մոտալուտ ժամ։ Բազմաթիվ փաստերով հեղինակը ցույց է տալիս այն խանդավառ ընդունելությունը, որին արժանանում էին հաղթական ռուսական զորքերն Արևմտյան Հայաստանում։ Դա չէր արտահայտվում սոսկ նյութական օգնությամբ և բարեկամական ցույցերով։ Ամենուր հայերը զորաջոկատներ էին կազմակերպում, պահակային ծառայություն կատարում, հանդես գալիս իբրև կապավորներ և ուղեցույցներ։ Եվ որքան խորն էր ապրած խնդությունը պատերազմի սկզբին և ընթացքում, նույնքան խորը եղավ հիասթափությունը Ադրիանապոլի պայմանագրից, երբ գրավված տարածքը գրեթե ամբողջությամբ վերադարձվեց Թուրքիային։ Հայ ժողովրդի տարերային զանգվածային գաղթը ցույց տվեց, որ այլևս նրա համար անհանդուրժելի է Թուրքական լուծը, որ նա հաստատակամորեն իր բախտը կապել է Ռուսաստանի հետ։ Դա էր 1828—1829 ԹԹ. ռուս-Թուրքական պատերազմի անառարկելի դասը։

Գրքի երրորդ գլուխը նվիրված է Ղրիմի պատերազմի Կովկասյան ռազմաճակատին։ Հայտնի է, որ Ղրիմի պատերազմը ավարտվեց ցարական Ռուսաստանի պարտությամբ՝ որպես իրենց դարն ապրած ճորտատիրական-ինքնակալական կարգերի հետևանք։ Այս պատերազմում ևս, չնայած պատերազմող երկու կողմերի համար էլ նրա անարդարացի բնույթին, Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների համակրանքը Ռուսաստանի կողմն էր։ Գրքում բերված փաստերն անառարկելիորեն համոզում են, որ Ղրիմի պատերազմի ժամանակ ևս հայ ժողովուրդը լայն զանգվածային մասնակցություն ունեցավ Կովկասյան ռազմաճակատում ծավալված մարտական գործողություններին, և եթե Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերը տարան փայլուն հաղթանակներ ու դրանով իսկ թեթևացրին Փարիզի հաշտության ծանր պայմանները, ապա դրանում անմասն չէր նաև հայ ժողովուրդը։

Հայ ժողովրդի պատմության մեջ խիստ կարևոր իրադարձություն էր 1877—1878 ԹԹ. ռուս-Թուրքական պատերազմը։ Այդ պատերազմում ևս մեծ էր հայ ժողովրդի, նրա կամավորական զորաջոկատների դերը։ Այդ առումով հեղինակի բերած փաստերը պերճախոս են։ Մեր կարծիքով, 1877—1878 ԹԹ. ռուս-Թուրքական պատերազմը իր նշանակությամբ զգալի չափով համահնչուն էր 1828—1829 ԹԹ. ռուս-Թուրքական պատերազմին։ Այս անգամ ևս բավական իրական հեռանկարներ էին բացվել արևմտահայերի ազատագրության և Հայաստանի միավորման համար. պատերազմի հետևանքով միջազգային դիվանագիտական հարց դարձավ Հայկական դատը։ Սակայն այն ևս, Արևելյան հարցի նման, դարձավ եվրոպական մեծ տերությունների առուծախի առարկան և թանկ նստեց հայ ժողովրդին։ Փաստորեն հայ ժողովրդի տված զոհերը և թափած արյունը զուր անցան։ Բայց դրանք եկան ապացուցելու այն անվերապահ վստահությունը, որ տածում էին հայ ժողովրդական զանգվածները դեպի Ռուսաստանը, դեպի ռուս ժողովուրդը։

Ա. Մ. Պողոսյանի գրախոսվող աշխատության կարևոր արժանիքներից մեկն այն է, որ ռուս-հայ բարեկամության հիշյալ նշանակալից դրվագներն այն դիտարկում է պատմական լայն ֆոնի վրա։ Հեղինակն իրավացի կերպով բավական մեծ տեղ է հատկացրել եվրոպական խոշոր տերությունների, մասնավորապես Անգլիայի, դիրքավորմանը ռուս-Թուրքական հարաբերու-

թյուններում։ Սկզբից մինչև վերջ աշխատության մեջ կարմիր թելի պես անցնում է այն անհերքելի միտքը, որ անգլիական կառավարության եսակենտրոն քաղաքականությունն այն խոչընդոտն է եղել, որ մշտապես խանգարել է հայ ժողովրդի ազատաբաղձ նկրտումների իրագործմանը։ Մղվելով անգլիական կապիտալիզմի գաղութային քաղաքականության շահերով և դրանից բխող թուրքական կայսրության «ամբողջականությունը» անխախտ պահելու ձգտմամբ, XIX դ. ռուս-թուրքական բոլոր պատերազմների ընթացքում բուրժուա-արիստոկրատական Անգլիան միայն մեկ նպատակամղում է ունեցել՝ թույլ չտալ Ռուսաստանին իր ազդեցությունը տարածելու Օսմանյան կայսրությունում, մինչդեռ Ռուսաստանի քաղաքականությունը միշտ էլ օբյեկտիվորեն համընկել է Անգլիայի կողմից «անձեռնմխելի» և «ամբողջական» պահպանվելիք Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների ազատագրական ձգտումներին։ Ավելին, Անգլիան չանացել է սատարել Անդրկովկասում թուրքական էքսպանսիային, մաղաչափ իսկ հոգ չտանելով, թե որպիսի դժնի հետևանքներ դա կունենա անդրկովկասյան ժողովուրդների համար։ Այդ առումով իրավացի է հեղինակը, երբ եզրակացնում է, որ հայ ժողովրդի ցույց տված օգնությունը ռուսական բանակներին նաև նշանակալից ավանդ էր թուրքական էքսպանսիան Անդրկովկասում ձախողելու գործում։

Հիշտ է հեղինակի այն պնդումը, որ, չնայած Կովկասյան ռազմաճակատի օժանդակ նշանակությանը, XIX դ. բոլոր ռուս-թուրքական պատերազմների արդյունքներում Կովկասյան ռազմաճակատի լուման մեծ է եղել։ Գործելով Արևմտյան Հայաստանի տարածքում, հայկական հոծ զանգվածներով բնակեցված և բարեկամական միջավայրում, ռուսական զենքը այստեղ միշտ էլ նշանակալից հաջողություններ է հասել, չնայած ռուսական Կովկասյան բանակի փոքրաթվությանը։ Այդ առումով, ինչպես արդեն նշել ենք, հատկանշական է Ղրիմի պատերազմը, երբ շնորհիվ Կովկասյան ռազմաճակատում տարած հաղթանակների, պարտված ցարական Ռուսաստանը պարտված պետության վիճակի մեջ զրեց Թուրքիային և կարողացավ համեմատաբար տանելի պայմաններով հաշտություն կնքել, կշեռքի նժարին Սևաստոպոլի դիմաց գնելով Կարսը։

Հարկ է նշել, որ արժեքավոր այս գրքում տեղ են գտել նաև որոշ թերություններ։ Աշխատությունը չունի ընդհանուր ամփոփում, չեն ընդհանրացվում հեղինակի մտքերը և եզրակացությունները։ Շահեկան կլիներ որոշակի բացահայտել հայ ազատագրական մտքի նպատակամղումները, զրսևորումները՝ կապված Ռուսաստանի և նրա վարած քաղաքականության հետ։ Դժվար է համաձայնվել հեղինակի այն պնդման հետ, թե XVIII դ. վերջին հայ ազատագրական շարժման մեջ «սաղմնավորվում էր երրորդ՝ դեմոկրատական ուղղությունը, որի գլխավոր ուժը աշխատավոր գյուղացիությունն էր» (էջ 22), որը պայքարում էր ոչ միայն օտար, այլև սեփական շահագործողների դեմ։ XVIII դ. պայմաններում դեռևս նման խնդիրներ առաջադրող հոսանք չէր կարող առաջ գալ, քանի որ առաջնահերթ խնդիրը օտարերկրյա լծի թոթափումն էր։ Դեմոկրատական ուղղության կրողը գալութահայ բուրժուազիան էր, որի առաջադրած խնդիրներն ինչ-որ չափով համընկնում էին աշխատավոր գյուղացիության շահերին։ Համաձայն չենք հեղինակի նաև այն պնդման հետ (էջ 21), որ հայ ազատագրական շարժման մեջ գոյություն է ունեցել ազնվականական-արիստոկրատական ուղղություն, որի ներկայացուցիչներն են եղել Ռուսաստանում ապրած հայ գործիչները, ռուսահայ գաղութներում հայ գործիչները, պատկանելով բուրժուազիային, չէին կարող ազնվականական պահանջներ առաջադրել։

Ցավոք, գրքում տեղ են գտել նաև որոշ փաստական անճշտություններ, անունների տարընթերցումներ, ինչպես օրինակ, Վ. Գ. Դելյանով (էջ 40), պետք է լինի՝ Դ. Ա. Դելյանով, Արղուտինսկի-Դոլգորուկով (էջ 116), պետք է լինի՝ Արղության-Երկայնաբազուկ, Ուզուզլի (էջ 149), պետք է լինի՝ Ուղուզլի, «Սուրբ Ստանիսլավսկի երկրորդ աստիճանի» (էջ 185), պետք է լինի՝ «Սուրբ Ստանիսլավի երկրորդ աստիճանի», Դիդոր (էջ 92), պետք է լինի՝ Տեկոր, Կարսի եպիսկոպոս Գրիգոր Այվազյան (էջ 248), պետք է լինի՝ Աղվանյան, Բեռլինի կոնգրեսը բացվեց 1878 թ. հունվարի 13-ին (էջ 284), պետք է լինի՝ հունիսի 13-ին և այլն։ Սրանք, իհարկե, վրիպակներ են, բայց գերադասելի կլիներ խուսափել։

Ա. Մ. Պողոսյանի գիրքը կարևոր է այն առումով, որ մեր հասարակության ուշադրությունը կրկին բևեռում է ռուս և հայ ժողովուրդների պատմական բարեկամության անմոռաց դրվագներից մեկի՝ այն համատեղ պայքարի վրա, որ մղել է հայ ժողովուրդը ռուսական բանակների հետ թուրքական բռնապետության դեմ հանուն իր ազատագրության։ Այդ առումով դժվար է գերագնահատել աշխատության կարևորությունն ու այժմեականությունը։

Վ. Ա. ԴԻԼՈՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Հ. Խ. Դարբինյան—Անդրկովկասը «Կոմունիստական ինտերնացիոնալ» ամսագրի էջերում (1919—1921 թթ.) 3

Ս. Ս. Մելիքյան, Հ. Բ. Ասաքելյան—Մրցող կոնստրուկցիաները գիտության լեզվում 12

Ա. Կ. Զարյան—Վիեննական Սեցեսսիոն 25

Ս. Զ. Գևորգյան—Բաֆֆին և կնոջ ազատագրման հարցը 38

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ա. Մ. Անթոսյան—Աշխարհարարի ըղձական, պայմանական, հարկադրական նպատակների առաջացումն ու զարգացումը 46

Ալեքսանդրա Երեմյան—Հայաստանի V—VII դդ. գմբեթավոր կառույցների նախագծման սկզբունքների մասին 56

Ա. Ե. Սարգսյան—Նախդրավոր բայերը հունգարերենում 83

Ա. Մ. Մինասյան—Խայլամի քառյակները օտար լեզուներով 90

Ա. Շ. Մնացականյան—Երբ այլ կերպ են մեկնարանվում փաստերը . . . 100

Ա. Յա. Կակովկին—Հայկական գեղարվեստական արծաթագործության XI դ. հուշարձան 108

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Վ. Ա. Դիլոյան—Ա. Մ. Պողոսյան, Ռուս-հայ բարեկամության պատմությունից . 117